ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2024 թվականի N 853 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 1264-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1264-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 4-րդ կետը «ՄՄԾ-ն» բառից հետո լրացնել «՝ անձնական օգնականի հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ համաձայն N 6 ձևի, որը ՄՄԾ տարածքային կենտրոնը կնքում է սույն հավելվածի 27-րդ կետում նշված շահառուի և անձնական օգնականի միջև կնքված Ձև N 2 պայմանագիրը ՄՄԾ ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:» բառերով.

2) որոշման հավելվածի 5-րդ կետում «Յուրաքանչյուր» բառը փոխարինել «ՄՄԾ տարածքային կենտրոնի հետ Ձև N 6 պայմանագրի կնքումից հետո յուրա-քանչյուր» բառերով.

3) որոշման հավելվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Անձնական օգնականների հայտադիմումները ներկայացվում են այդ նպատակով ստեղծված՝ անձնական օգնականների հաշվառման առցանց հարթակում (այսուհետ՝ առցանց հարթակ), որը հասանելի է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին: Առցանց հարթակում հաշվառված անձանց վերապատրաստումը «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ը իրականացնում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի սահմանած կարգին և ժամանակացույցին համապատասխան: Վերապատրաստման արդյունքում վկայական ստացած անձնական օգնականները հաշվառվում են առցանց հարթակի անձնական օգնականների ռեեստրում:».

4) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին կետով.

«15.1. Անձնական օգնականների վերապատրաստման դասընթացներում առաջնահերթությունը տրվում է՝

1) ՄՄԾ տարածքային կենտրոն դիմած հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրելի անձնական օգնականի թեկնածուին, որի վերաբերյալ առցանց հարթակում նշում է կատարում ՄՄԾ-ն: Այս դեպքում վերապատրաստումը կազմակերպվում է ոչ ուշ, քան սույն հավելվածի 18-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո երկամսյա ժամկետում.

2) առցանց հարթակում հաշվառված այն անձին, ում բնակության վայրը մոտ է անձնական օգնականի ծառայության համար դիմած շահառուի բնակության վայրին:».

5) որոշման հավելվածի 25-րդ կետի 1-ին ենթակետում «անձինք» բառը փոխարինել «անձը» բառով և «եթե սովորում կամ աշխատում է» բառերից հետո լրացնել «(համաձայն «Զբաղվածության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերի)» բառերով.

6) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 38-րդ և 39-րդ կետերով.

«38. Եթե մշտադիտարկման արդյունքում պարզվում է, որ շահառուն չի ապահովել սույն կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետում նշված պահանջը կամ շահառուի աշխատելու կամ սովորելու կարգավիճակն ընդհատվել կամ ավարտվել է պայմանագրի կնքման պահից հետո (արձակուրդի ժամանակահատվածն ընդհատում կամ ավարտ չի համարվում), ապա մշտադիտարկում իրականացնող անձը (անձինք) դրա մասին գրավոր տեղեկացնում է ՄՄԾ-ին, վերջինս կազմակերպում է ՄՄԾ-ի և անձնական օգնականի միջև կնքված պայմանագրի լուծումը: Այս դեպքում անձնական օգնականի և շահառուի միջև կնքված պայմանագիրը համարվում է լուծված:

39. Սույն կարգի 38-րդ կետով սահմանված դեպքում տվյալ շահառուի հետ պայմանագիր հաջորդիվ կնքվում է, եթե նա աշխատում կամ սովորում է:».

7) որոշման հավելվածի N 2 ձևի 3.4-րդ կետը «3.2-րդ» բառից հետո լրացնել «կամ 3.3-րդ» բառերով.

8) որոշման հավելվածի N 2 ձևի 6.5-րդ կետում «մեկ տարի ժամկետով» բառերը փոխարինել «մինչև ԾԱԾ-ի վավերականության ժամկետի ավարտը» բառերով.

9) որոշման հավելվածը լրացնել նոր՝ N 6 ձևով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ